

Հարգելի Տիրայր Մուրադյան,

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի՝ օրենքով նախատեսված գործունեության հիմնական նպատակներն են տուժողների շահերի պաշտպանությունը և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը, ինչն անվերապահորեն իրականացրել և իրականացնում է Բյուրոն: Միևնույն ժամանակ՝ Բյուրոյի կառավարման մոդելն ենթադրում է ԱՊՊԱ համակարգի բոլոր մասնակիցների շահերի հաշվեկշռված ապահովում: Ուստի սկզբունքորեն համաձայն չենք Բյուրոյի կողմից առանձին ապահովագրական ընկերությունների շահերը սպասարկելու հետ կապված Ձեր գնահատականին:

Այժմ հերթականությամբ անդրադառնանք Ձեր կողմից նշված այլ նկատառումներին՝

- Դուք նշում եք, որ, ըստ Ձեր ունեցած նախորդ փորձի, ԱՊՊԱ համակարգում հատուցման գործընթացը ձգձգվում է ամիսներով: Իրականում՝ արդեն ավելի քան 3 տարի է, ինչ ԱՊՊԱ ոլորտում հատուցումների գործընթացի նման երկար տևողություններ առկա չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման երկար տևողությունը պայմանավորված է քրեաիրավական կամ դատական ուղեկցող գործընթացներով: Բյուրոյի կարգավորումներով հատուցման գործընթացի համար սահմանված են հստակ և բավական սեղմ ժամկետներ, իսկ այդ ժամկետների կետանցման համար նախատեսված են բավականին խիստ տույժեր, որոնցից, ի դեպ, օգտվում են բազմաթիվ սպառողներ: Այս մեխանիզմներն, ի լրումն վերահսկողական միջոցառումների, իրենց հերթին հարկադրում են ապահովագրական ընկերություններին խստորեն առաջնորդվել Բյուրոյի կարգավորումներով սահմանված ժամկետներով և որևէ ուշացումներ թույլ չտալ: Ձեր նշած դեպքի հետ կապված ապահովագրական հատուցումների գործընթացի տևողությունը միջինում 2 շաբաթ է, որի ընթացքում տեղի են ունենում բավական գործընթացներ՝ ճանապարհային ոստիկանության կողմից կազմված ելակետային տվյալները փոխանցվում են ապահովագրական ընկերություններին, կատարվում են վնասի և մեղավորության որոշման փորձաքննություններ, կայացվում են հատուցումը վճարելու կամ մերժելու որոշումներ և արդյունքները (ելակետային տվյալներ, վնասի և մեղավորության փորձաքննության արդյունքներ, հատուցման վճարման կամ մերժման որոշում) մեկ ամբողջական փաթեթով ծանուցվում են պատահարների բոլոր մասնակիցներին էլեկտրոնային եղանակով: Այնուհանդերձ՝ եթե Ձեզ մոտ առկա են կոնկրետ փաստեր հատուցման գործընթացի ամիսներով անհիմն ձգձգվելու վերաբերյալ, ապա խնդրում ենք տվյալ դեպքի հետ կապված որևէ նույնականացնող տվյալ (օրինակ՝ տուժող վարորդին պատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը) տրամադրել Բյուրոյին՝ համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելու և խախտման առկայության դեպքում կարգապահական միջոցառումներ իրականացնելու նպատակով: Միևնույն ժամանակ, ինչպես վերը նշեցինք, նման ուշացումների համար կարող եք դիմել և համապատասխան տույժեր պահանջել ապահովագրական ընկերությունից:
- Փորձաքննությունների գործընթացի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ ԱՊՊԱ համակարգն իր կարգավորումներով և տրամաբանությամբ հաշվեկշռված համակարգ է և օժտված փոխադարձ հսկողության և շահերի բախման հաշվեկշռվածության մի

շարք սկզբունքներով: Այս սկզբունքներից կարևոր է առանձնացնել ԱՊՊԱ ոլորտի բոլոր մասնակիցների (Ապահովադիր, տուժող, վարորդ, ապահովագրական ընկերություն, Բյուրո) հնարավորությունը նշանակելու փորձաքննություններ՝ պատճառված վնասի չափի և վթարում ունեցած մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կրկնակի փորձաքննություններ պահանջելու միջոցով բողոքարկելու դրանք, ինչը, հավատացնում ենք, գործընթացում ապահովում է առավելագույնս օբյեկտիվ արդյունք: Տվյալ դեպքում՝ ապահովագրական ընկերությունն իր և/կամ իր հաճախորդի շահերի պաշտպանության տեսանկյունից օգտվել է առաջնային փորձաքննություն նշանակելու իր իրավունքից, ինչը բնական է և տեղավորվում է կարգավորումների ներկայիս տրամաբանության շրջանակներում: Ավելին՝ փորձաքննության նշանակումն ենթադրում է որոշակի լրացուցիչ ծախսերի իրականացում փորձաքննություն պահանջող կողմից, ուստի անհիմն փորձաքննության նշանակումն ենթադրում է ավելորդ ծախսերի իրականացում և հետևաբար անիմաստ է նման անհիմն պահանջով անհարկի ձգձգում առաջացնել գործընթացում, հատկապես, որ դրա տևողությունը ավել չէ 7 օրից: Համապատասխանաբար տվյալ դեպքում սահմանված ժամկետների որևէ ձգձգում ապահովագրական ընկերության կողմից չենք տեսնում:

- Կոնկրետ Ձեր գրառման մեջ նշված պատահարը տեղի է ունեցել 09/06/2019թ-ին, դրա գծով հատուցման վերաբերյալ դիմումը Դուք ներկայացրել եք 11/06/2019թ-ին, հետևաբար Ձեր դիմումի հետ կապված հատուցման ամբողջական փաթեթը Ձեզ կձանուցվի առաջիկա օրերի ընթացքում: Առաջարկում ենք սպասել հատուցման փաթեթի ծանուցմանը, ամբողջական ծանոթանալ այդ փաթեթին և բողոքների առկայության դեպքում առաջնորդվել <https://www.appa.am/datas/zlawdocs/7633e90e5d5365b2e1a5a95c5838b7dc.pdf> հղումով ներկայացված ուղեցուցով՝ դիմելով Բյուրոյին:

Որպես ամփոփում՝ նշենք, որ համաձայն չենք ԱՊՊԱ համակարգի վերաբերյալ Ձեր հնչեցրած կոշտ գնահատականին: ԱՊՊԱ համակարգը բավական դինամիկ և անընդհատ զարգացող համակարգ է, բնականաբար զերծ չլինելով նաև նոր առաջացող խնդիրներից, որոնք տարեցտարի լուծվում և կատարելագործվում են: Միայն վերջին տարվա վիճակագրությամբ՝ ԱՊՊԱ համակարգում թվով 68,000 տուժողների վճարվել է մոտ 14 մլրդ դրամի վնասի հատուցումներ, իսկ այս պահին համակարգի հատուցումների մակարդակը գտնվում է 75%-ի շրջանակներում:

Մշտապես պատրաստ ենք լսել և քննարկել ԱՊՊԱ համակարգի կարգավորումների և խնդիրների վերաբերյալ հանրային ազդակներն ու առաջարկությունները՝ ակնկալելով օբյեկտիվ քննադատություններ, վերլուծություններ և առաջարկություններ:

**Հարգանքով,
Բյուրո**